ԿԱՐԾԻՔ

Հասմիկ Արամի Խաչատրյանի «Բանավոր խոսքի զարգացման հիմնախնդիրը միջին դպրոցում» խորագրով ատենախոսության մասին՝ ներկայացված ԺԳ. 00. 02 - «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (հայոց լեզու)» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Խոսքի զարգացումը անձի ոչ միայն մտագործունեության, հոգեմտավոր կարողությունների դրսևորման, այլև որպես հասարակական էակ ներդաշնակ համակեցության, հաղորդակցման կարևոր պայման է: Տրամաբանորեն ճիշտ, լեզվաքերականական և ոճական առումով գրագետ կառուցված բանավոր խոսքը վկայում է խոսողի լեզվազգացողության, խոսքի գործառական և կառուցվածքային հատկանիշների տիրապետման մասին: Բանավոր խոսքի զարգացումը լեզվի դասավանդման մեթոդիկայի կարևոր հիմնահարց է ու չափորոշչային պահանջ. խոր ուսումնասիրման կարիք ունեն այդ ոլորտի մանկավարժահոգեբանական, սոցիալ-մշակութային, լեզվաբանական, առողջագիտական ու այլ կողմեր, այսինքն՝ խնդիրը բազմատեսանկյուն է և հետազոտության կարևոր բնագավառ է շոշափում:

Ատենախոսությունը գրված է տրամաբանորեն ծրագրված պլանով, գիտական հիմնախնդրի մշակում է և սոցիալ-մշակութային կարևոր նշանակություն ունի: Ատենախոսը սովորողների բանավոր խոսքի զարգացումը դիտարկում է հոգելեզվաբանական արդի հայեցակարգերի, անձի խոսքի մշակույթին ներկայացվող չափորոշչային պահանջների համատեքստում: Հետազոտության մեթոդաբանական հիմքը կազմող փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական, լեզվաբանական հայեցակարգերն ու տեսությունները խորապես հետազոտված են և պայմանավորել են ատենախոսության հիմնադրույթների հավաստիությունն ու արժանահավատությունը:

Հետազոտության բաղադրիչները՝ նպատակը, վարկածը, օբյեկտը, առարկան, խնդիրների, պաշտպանությանը ներկայացվող դրույթները կառուցվածքային

համապատասխանություն ունեն և տրամաբանորեն արտահայտված են եզրակացություններում: Աշխատանքի երեք գլուխներում հաջորդաբար լուծված են հետազոտության մեջ առաջադրված խնդիրները:

«Բանավոր խոսքի զարգացումը որպես աշակերտների մտածողության և աշխարհայացքի ձևավորման գործոն» խորագրով առաջին գլխում քննության են առնված քաղաքակրթական զարգացումների տեղաշարժերում խոսքի՝ որպես հասարակական երևույթի զարգացման վերաբերյալ առանցքային տեսություններ: Ժամանակագրական լայն կտրվածքով՝ դեռևս անտիկ դարաշրջանից սկսած, հայ և համաշխարհային գործիչների ճարտասանական աշխատությունների համակողմանի վերլուծությունը բացահայտում է խնդրո առարկա երևույթի կարևորությունը մարդկության բազմադարյան պատմության տարբեր շրջադարձերում՝ որպես հաղորդակցման, հոգեբանական ներգործության և հուզազգայական ոլորտի դրսևորման կարևոր պայման: Այնուհետև հեղինակը բանիմացորեն խնդիրը տեղափոխում է կրթության ոլորտ՝ այն դիտարկելով հանրակրթության հիմնական ծրագրերի շրջանակում սովորողների կարողունակությունների և կրթական վերջնարդյունքների ձևավորման առումով: Ուշագրավ է այն, որ ատենախոսը հիմնախնդիրը դիտարկում է սովորողների աշխարհայացքի և ճանաչողության զարգացման լայն համատեքստում:

Ատենախոսությունը ծավալուն վերլուծություններ է պարունակում բնագրային նյութերի միջոցով սովորողների բանավոր խոսքի զարգացման և դրա միջոցով հուզակամային որակների, արժեքային դատողությունների, դրդապատճառների ձևավորման շուրջ: Հիմնավորվում է, որ նմանօրինակ առաջադրանքների միջոցով ձևավորվում են բառի, խոսքի իմաստի և գործողությունների միջև զուգորդական կապեր, որը դաստիարակչական գործառույթ ունի: Ատենախոսը առաջադրանքների համալիր փունջ է մշակել սովորողների խոսքը, ընկալումները և պատկերացումները զարգացնելու ուղղությամբ:

«Խոսքի տեսակները. սովորողների՝ խոսքի տարբեր տեսակներով արտահայտվելու կարողության զարգացման մեթոդները» խորագրով երկրորդ գլխում

լեզվաբանական ծավալուն վերլուծություններ են արված խոսքի հոգետրամաբանական հատկանիշների վերաբերյալ, որոնք նաև դաստիարակչական առանցքային հարցեր են շոշափում: Քննության են առնված ներքին և արտաքին խոսքի, երկխոսություն և մենախոսություն կառուցելու կարողությունների, խոսքի միջոցով զգայությունների արտահայտման հարցեր: Դիտարկված են լեզվամտածողության զարգացմանը, խոսքի ընկալման և տրամաբանական կառուցման հմտությունների, վերլուծահամադրական կարողությունների ձևավորմանը և այդ ուղղությամբ ուսուցչի գործառույթներին ու մեթոդական հմտություններին վերաբերող հարցադրումներ: Ատենախոսը բավականին ուշագրավ վերլուծություններ է կատարել բանավոր խոսքի զարգացման մեթոդների, ուսուցման կազմակերպման ձևերի վերաբերյալ. տեքստը դիտարկվում է որպես կապակցված խոսքի զարգացման հիմք, ստեղծագործական բացահայտումների աշխարհ, որի հիման վրա էլ իրականացվում է շարահյուսական միավորների քննությունը:

Ուսումնասիրվող ենթահարցերի բավականին լայն շրջանակ ընդգրկող երրորդ գլուխը՝ *«Բանավոր խոսքի զարգացման մեթոդական համակարգը»* խորագրով, նվիրված է ուսումնական դասընթացների շրջանակներում բանավոր խոսքի զարգացման ուսուցաբանական խնդիրներին: Բնութագրված են բանավոր խոսքի դրդապատճառների ձևավորման գործոնները, որը ներառում է սովորողի կենսամիջավայրը՝ իր բոլոր բաղադրիչներով: Այստեղ ատենախոսն իր առջև դրված խնդիրը լուծում է տարբեր ժանրերի տեքստերի շուրջ ստեղծագործական աշխատանքի միջոցով՝ լեզվաբերականական իմացությունը ծառայեցնելով վերջնական նպատակին՝ բանավոր խոսքի զարգացմանը, գործնականում տիրապետմանը, խոսքի մշակույթին, պատկերավոր մտածողությանը, հաղորդակցմանը, խոսողի ինքնուրույնության և անհատականության զարգացմանը, խոսքային գործունեության բարդույթների հաղթահարմանը: Ներկայացված տեքստակենտրոն առաջադրանքների համալիրները, մեթոդները, բնագրերի վրա հիմնված ստեղծագործական աշխատանքները կապակցվում են սովորողի կենսափորձի հետ:

Ուսումնասիրվող հիմնախնդրի տեսանկյունից կարևոր է խոսքի զարգացման գիտամեթոդական հիմքերի քննությունը: Գաղտնիք չէ, որ սովորողները դժկամորեն են յուրացնում քերականական նյութը, որը գրագետ խոսքի հիմքն է: Ատենախոսը մասնագիտական վարպետությամբ հիմնավորում է, թե լեզվաքերականական իրողությունների միջոցով /դարձվածք, բառի բազմիմաստություն, բառիմաստի փոփոխություն, բառակազմություն, ձևաբանություն և այլն/ ինչպես կարելի է զարգացել բանավոր խոսքը՝ ներկայացնելով վարժությունների, առաջադրանքների բովանդակալից, հետաքրքիր համալիր:

Անշուշտ, բանավոր խոսքի զարգացման հիմնախնդիրը միայն մայրենիի դասերին չի լուծվում. դա խոր ու համակողմանի գործընթաց է, որն իրականանում է բոլոր առարկաների դասերին: Ատենախոսը հետազոտել է ուսումնական մի շարք առարկաների ներուժը բանավոր խոսքի կառուցման առումով և մշակել առաջադրանքներ բառապաշարի հարստացման ու խոսքի կառուցման ուղղությամբ: Ատենախոսը չի անտեսել նաև տարրականից միջին դպրոց անցման շրջափուլում խոսքի զարգացման գործընթացի հաջորդայնության ապահովման հետ կապված շատ կարևոր հիմնահարցը՝ զուգահեռաբար ուսումնասիրելով նաև տարրական դպրոցի խնդիրներն այդ ուղղությամբ, որն ընդլայնում է հետազոտության շրջանակները և հետազոտության արդյունքների կիրառման ոլորտը: Այստեղ ևս քննության են առնված խոսքային գործունեության սոցիալ-հոգեբանական մի շարք հարցեր:

Հետազոտության վերջին ենթագլուխը եզրափակում է բանավոր խոսքի զարգացման մեթոդիկայի փորձարարական հիմնավորումը: Նկարագրված է «Խոսքի զարգացման քայլաշարային մեթոդը» և դրա կիրառման արդյունքում ստացված տվյալների արդյունավետության դինամիկան փորձարարական խմբերում: Հետազոտության տեսական և գործնական արդյունքներն ամփոփող տրամագրերն ու աղյուսակներն արժևորում են գիտափորձի արդյունքները, առաջարկված մեթոդիկայի մանկավարժական արդյունավետությունը, վկայում են հեղինակի գիտահետազոտական և մասնագիտական կարողությունների մասին:

Առաջարկվող թեմատիկ առաջադրանքների բազմազանությունը, տեքստային վերլուծությունների գրագետ մատուցումները բարձրացնում են ատենախոսության գիտամեթոդական արժեքը և թույլ տալիս հավաստել, որ մշակված մեթոդական համալիրի ներդնումը միջին դպրոցում մեծապես կնպաստի սովորողների՝ բանավոր խոսք կառուցելու կարողության ձևավորմանը, ճանաչողական որակների զարգացմանը, գեղարվեստական խոսքի տրամաբանական, հուզական, իմաստային, գեղագիտական, պատկերավոր ընկալմանը:

Ատենախոսությունն ամբողջական, ավարտուն, հիմնավոր և արդիական հնչեղություն ունեցող հետազոտություն է, որն արտացոլում է հեղինակի մանկավարժական, հոգեբանական, մեթոդական, մասնագիտական գիտելիքները, գիտահետազոտական ինքնուրույն աշխատանք կատարելու կարողությունները, մայրենիի բացառիկ զգացողությունն ու խոսքի մշակույթը:

Այնուհանդերձ կուզենայինք առանձնացնել որոշ նկատառումներ.

1. Աշխատանքը կշահեր, եթե որոշ չափով անդրադարձ կատարվեր դեռահասության կենսափուլում միջին դպրոցականի նյարդահոգեբանական, ֆիզիոլոգիական զարգացման առանձնահատկություններին և խոսքային գործունեության դրդապատճառներին:

2. Շահեկան կլիներ աշակերտների բանավոր խոսքի զարգացման ուղղությամբ հանձնարարականներ առաջարկել, որը կներառեր մանկավարժական, սոցիալ-հոգեբանական և առողջագիտական կողմեր՝ խոսքային գործունեության անհամարձակության հաղթահարում, միմյանց համեմատելու և թերարժեքության զգացման բացառում, ուսուցչի մանկավարժական տակտ, հանդուրժողականության, աշակերտի խոսքային գործունեության խթանում, նաև դպրոցի, ընտանիքի, հասարակության համարժեք, միասնական, համաձայնեցված մոտեցում:

3. Խոսքի զարգացման մեթոդներին ատենախոսն անդրադարձել է թե՛ «Բանավոր խոսք. դրա զարգացման մեթոդները» խորագրով 2.2. ենթագլխում, թե՛ երրորդ գլխի առաջին ենթագլխում՝ «Խոսքի զարգացման մեթոդական համակարգը մայրենիի

դասագործընթացում»: Ցանկալի կլիներ մեթոդներին վերաբերող վերլուծությունները զետեղել մեկ ենթագլխում:

Մեր կողմից արված նկատառումներն ընդհանուր առմամբ չեն ազդում հետազոտության արժեքի և այն գնահատականի վրա, որին իրավամբ արժանի է աշխատանքը:

Հասմիկ Արամի Խաչատրյանի ***«Բանավոր խոսքի զարգացման հիմնախնդիրը միջին դպրոցում»*** խորագրով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԲԿԳԿ-ի կողմից ԺԳ. 00. 02 - ***«Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (հայոց լեզու)»*** մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացվող պահանջներին, և հեղինակն արժանի է հայցած գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝
մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ՝ **Գ. Հ. ՀԱԿՈԲՅԱՆ**

Գ. Հ. Հակոբյանի ստորագրությունը հաստատում եմ՝
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի գիտքարտուղար,
մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ՝ **Մ. Մ. ԻՍՊԻՐՅԱՆ**

23 05. 2024 թ.